

Եղիսարէթ Զաքարեան Աղարարայեանց,  
Մարիամ Միքայէլեան Ասատուրեանց:

ՅՈՒՅԱԿ

Բայն Զաքարեանց, Ստեփանոս, Վերնիցեանց և  
Ստեփանոս Զաքարեան Կաթողիկոս 1872 թ.

| ԱՆՈՒԱՆՔ ԳՊՐՈՅԱՅ.                                                                                                                                    | Քիւ ռ օ յ ա մ ան օ յ ա յ ց . |                              |                              |                              |                              |                              |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------|------------------------------|------------------------------|------------------------------|------------------------------|------------------------------|
|                                                                                                                                                     | Քիւ ռ օ յ ա մ ան օ յ ա յ ց . | Քիւ ռ օ յ ա մ ան օ յ ա յ ց . | Քիւ ռ օ յ ա մ ան օ յ ա յ ց . | Քիւ ռ օ յ ա մ ան օ յ ա յ ց . | Քիւ ռ օ յ ա մ ան օ յ ա յ ց . | Քիւ ռ օ յ ա մ ան օ յ ա յ ց . |
| Միսական Հոգեւոր ա-<br>րական Դպրոց ի սրահի<br>Ս. Աստուածամոր Աւագ<br>Եկեղեցւոյ . . . . .                                                             | 1                            | 2                            | 1                            | 7                            | 12                           | 31                           |
| Միսական Հոգեւոր ա-<br>րական Դպրոց յանուն Ս.<br>Գէորգայ քաջամարտիկ զօ-<br>րավարի կառուցեալ ի<br>սրահի Ս. Պատարինէ կու-<br>սի Եկեղեցւոյ . . . . .     | 1                            | 2                            | 2                            | 3                            | 15                           | 20                           |
| Հոգեւոր Օրիորդական<br>Դպրոց, զետեղեալ ի տան<br>նուիրեայ ի 1870 ամի Տինգ<br>ամ ժամանակաւ ի Գե-<br>րազնիւ Գրիգորէ Պարա-<br>պետեան Պօպովեանց . . . . . | 1                            | 3                            | 1                            | 2                            | 5                            | 53                           |
| Երկրորդ դասատուն ծը-<br>խական Հոգեւոր արական<br>դպրոցաց . . . . .                                                                                   | 6                            | 2                            | 1                            | 13                           | 16                           |                              |
| Երկրորդ դասատուն Հո-<br>գեւոր Օրիորդական Դպրոցի . . . . .                                                                                           | 5                            | 4                            | 1                            | 9                            | 14                           |                              |
| Ընդ ամենն . . . . .                                                                                                                                 | 3                            | 18                           | 2                            | 17                           | 22                           | 134                          |

ՅԵՐԳԵՐԻՄԻԱՆԷ.

Խճաշիւն-Եւան Աղարար Կաթողիկոս.

Պատուական ամսագրոյ Օգոստոսի թուահա-  
մարին մէջ յօդուած մը կարդացինք այս վերնա-

դրով. « Համառօտ տեսութիւն Խրիմու և Պեսա-  
րապիղ քանի մի քաղաքաց հոգեւոր ծխական  
դպրոցաց ներկայ դրութեանը, Այդ յօդուածին  
մէջ պարունին մէկը (որոյ անունը դեռ յայտնի չէ  
հասարակաց, լայն իրեն ով և ինչպիսի անձ լի-  
նկը քաջ յայտնի է մեզի) Ագգրիմանի մանկանց  
և օրիորդաց դպրոցներուն վերայ խօսելու ժա-  
մանակ այնպիսի սուտեր և այնպիսի յանդուգն  
դատողութիւններ կընէ որ բոլոր յօդուածը ար-  
ժանի կը տեսնուի ըսուելու ոչ թէ համառօտ Կե-  
սիւն, այլ ծառ և կէտ գրեւոր գործիչ-  
իւն, վասն զի գոռոզ պատգամախօսի մանա-  
ւանդ թէ անիրաւ . . . մը ձեռով՝ կ'յարձա-  
կի նա մեր վրայ, և մեր ու մեր ազգատոհմին ա-  
նուանն ու պատուոյն վնաս բերող իմաստներ  
կգործածէ, չկարենալով յիշել անգամ՝ թէ իւր  
այդպիսի աններելի զրպարտական վարմունքովը  
կարող է դիւրաւ ոչ միայն հոգեւորական՝ հապա-  
նաւ աշխարհական դատաստանի տակ ձգուիլ, Եւ  
թէ պէտք այդ պարունը արժանի չէ պատասխանի  
ինչպէս որ ամեն զինքը զիտցողներն ալ կ'իկայնն,  
բայց որովհետեւ «Արարատ», ամսագիրը արժան  
համարի է պատուել անոր պրուածքը, — գուցէ  
կարծելով թէ ճշմարտութիւն ալ կ'գտնուի ըսած-  
ներուն մէջ, — և ամսագրոյ բարեմիտ ընթերցող-  
ները ևս առաւել կրնան խաբուիլ այն պարունին  
ստուութիւններէն, հարկ համարեցանք համառօտիւ  
հերքել այստեղ անոր ըրած զրպարտութիւննե-  
րուն զխաւորները:

Եւ նախ՝ չենք զիտեր թէ այդ պարունը որով  
իրաւամբ կամ ի՞նչ իշխանութեամբ ամբողջ  
քաղաքի մը ժողովրդեան քանի անգամ ընտրած  
և զանազան Գերապատիւ Առաջնորդներուն հաս-  
տատած հոգաբարձուացը վրայ կ'յարձակի յան-  
դգնաբար, և յանուանէ մեզի դէմ խօսելով կրէ՛  
թէ « իրեն հայրենապետ պարտ է համարած է  
խղճանն անտի շինութեան դպրոցին անոր քա-  
ւոր շաքիւն և անշաքիւն խաւովն իւր յետեւ  
մէջ անգործել, ելեղեղայ կ'բռնէ ու հանուց, Կա-  
նայեց ժամերէն-Եւանց յանդէպ իւրենէն . . .  
վարժապետներ կարգել դպրոցին մէջ, և Կեֆե  
հրապարակէն պէս փոխել զանոնք. . . որով  
չեմ հաւանել, եթէ ասեմ, տարի նոր՝ վարժապետ

Նոր կլինի դպրոցին մէջ, Այս յանգուզն խօս-  
քերը կարգացողը բնականաբար պիտի կարծէ,  
թէ ուրեմն այդ ինչ անիրաւ, յափշտակիչ, եկե-  
ղեցակողոյսուտ, ինքնադուլս և ինքնահաւան հո-  
գաբարձու է, որ վիճակաւոր առաջնորդաց և բո-  
լոր ժողովրդոց աչքին առջեւ՝ անոնց իրաւունք-  
ները իրեն սեպհականներ է, սրտին ուզած անիրա-  
ւութիւնները կրնէ, և միշտ անպատիժ կմնայ, բայց  
բարեմիտ ընթերցողին սիրտը և միտքը շուտով  
պէտք է հանդարտի՝ եթէ իմանայ անժխտելի փաս-  
տերով, թէ այն յանգուզն պարոնին ըսած խօս-  
քերը ծայրէ ի ծայր լի են ստուծեամբ, փասն զի,

Նախ՝ եթէ յօդուածին գրողը հայրենա-  
խօսքով այն կուզէ հասկըցնել՝ թէ Ագքիրմանի  
եկեղեցւոյն ու դպրոցին հոգաբարձութիւնը մեր՝  
Աստուածատրեան ազգատոհմին մէջ բաւական  
հին է, այդ ճշմարիտ է, մեր հանդուցեալ եղբայրը  
Մելգոն աղան 25 տարին աւելի այն պաշտօննե-  
րը կատարեց, և մենք կէս մը նորա հետ՝ և կէս  
մը նորա վախճանիէն ետքը՝ շարունակեցինք, Բայց  
ի՞նչպէս, Ոչ թէ անանուն պարոնին ըսած տիրա-  
պետական և անհաւատարիմ կառավարութեամբը,  
այլ այնու ազգասիրական և անձնանուէր ջերմե-  
ռանդ և հաւատարիմ ծառայութեամբ՝ որ ար-  
դէն վկայեալ է ոչ թէ միայն ժամանակին հոգեւոր  
իշխանաւորներէն, այլ և Ագքիրմանի, և կրնամք  
ըսել բոլոր Պետարապիոյ ժողովուրդներէն:

Երկրորդ, իրաւ է որ դպրոցին անշարժ կալուա-  
ծոց կառավարութիւնը մեր հանդուցեալ եղբորը  
ձեռքն էր, Բայց դպրոցին խանութը, որ կտակողին  
կամօքը ուղղակի յանձնուած էր մեր տնօրէնու-  
թեանը, 1867 ին նորէն յանձնուեցաւ մեզի միա-  
բան հաւանութեամբ ժողովրդոց քաղաքիս, ու-  
րեմն ի՞նչպէս կհամարձակի ըսել պարոնը՝ թէ  
մենք պարտաւոր ենք մեր գրողին կալուած-  
ները մեր յետագայ մեր մեծագոյն որ ըսել է բնու-  
թեամբ տիրապետել և ինքնահաճոյ կերպով կա-  
ռավարել:

(Մեղեմն է յաջորդ հոգեւոր)

# ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ.

Գերեզմանատան խնդիր: — Կրօնաց ղեմ հարածուէր: — Ընդհ.  
ժողով և Գանձաւարով ղեմ. Հայրապետի կողակէն համար: —  
Հեռագիր մը: — Ուսումնական ժողով դատարարական և Կրօն.  
ժողով կրօնի դատարարական փնտր:

Ահրջապէս Օգոստ. Սուլթան՝ Բերայի գերեզ-  
մանատան անիրաւ գրաւման համար Հոգեւորակա-  
նաց դասուն ի դիմաց տրուած աղերսագիրը ընդու-  
նեց սիրով, և հրամայեց որ ի դարուց հետէ Հա-  
յոց սեպհականութիւն եղածը՝ ոչ որ չէ կարող  
իշխել գրաւելու, հետեւաբար այսուհետեւ ալ Հայ  
ազգին է, ինչպէս հաղորդեց մեծ Եպարքոս:

Մշտաբաղաքիս բոլոր եկեղեցիներէն Եպիսկո-  
պոս՝ Աարդապետ ու Քահանայ հաւելուր ասեմն ա-  
ւելի անձինքէն՝ Պէշիկթաշ Կայսերական պալատին  
առջեւ՝ երբ (Դեկտ. 22ին) կէսօրին աղօթելու  
կերթար Սուլթանն՝ ընդունեց վերոյիշեալ աղեր-  
սագիրը՝ որն որ կրօնական ժողովոյ Ատենապետ  
Գեր. Թադէոս Ս. Արքեպիսկոպոս ձեռքով բռնած էր:

Ասկէց վերջը խուռն բաղմութեամբ աղերսա-  
տուք եղան ի գերեզմանատուն, ուր հաւաքուեցան  
2-3 հազարի չափ ազգայինք, ու կրօնական հան-  
դէս մը կատարեցին:

Հոգեւորականք մատուցող մտան ու զգեստա-  
ւորուեցան, և բոլոր գերեզմանատան մէջ թա-  
փօրով անդաստան ըրին ու տեառնագրեցին:

Բարեմաղթութիւններ ալ եղան:

Դեկտ. 28ին ալ նոյն գերեզմանատան Ս. Խոր-  
վիրապ մատուցին մէջ հանդիսաւոր պատարագ  
մատոյց Գեր. Խորէն Եպիսկոպոս, ի ներկայու-  
թեան հաղարաւոր ազգայնոց, որ նախ քան զՍ.  
պատարագն՝ միշտ Աղգ. և Կրօն. իրաւանց ջատա-  
գով կանգնելու համար հրաւեր և ընտիր քարոզ  
մը խօսեցաւ առ ժողովուրդն:

Պատարագի աւարտմանէն յետոյ՝ ի յիշատակ  
հոգւոյ հոգեւոր տեառն մերոյ արժանայիշատակ և  
արդիւնաւոր Յակոբ Ս. Վաթուղիկոսի ամենայն  
Հայոց հանգիստեան պաշտօն կատարուեցաւ, և նո-  
րին դամբարանին վերայ մեծ հանդէս եղաւ, ուր  
կրկին Գեր. Խորէն սրբազան լուսահոգւոյն սրբա-  
կենցաղ վարքը և յօդուած եկեղեցւոյ և ազգի մա-  
տուցած բաղմազգի բարեքները յիշելով, յորդորեց  
զժողովուրդն՝ որ Աղգ. և Կրօն. հալածմանց միջոցին